Նարինէ Նուշէրվանեան

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒԼՈՒՄՆ «ԱԶԴԱԿ»-ՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ (2010-2013 ԹԹ.)

Բանալի բառեր – «Ազդակ», Հայոց ցեղասպանութիւն, «Ֆութպոլային դիվանագիտութիւն», Սփիւռք, Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններ, ապաշրջափակում, Արցախեան հիմնահարց:

2010 թուականը նշանաւորուեց մի շարք կարեւոր իրադարձութիւններով, որոնք մեծ ազդեցութիւն թողեցին հայ-թուրքական յարաբերութիւնների վրայ: Նախ՝ յունուարի 12-ին, Հայաստանի Սահմանադրական դատարանի կողմից հայ-թուրքական արձանագրութիւնները ճանաչուելուց յետոյ, փետրուարի 12-ին ուղարկուեցին Ազգային ժողով՝ վաւերացման: Միեւնոյն ժամանակ շարունակւում էր միջազգային ճնշումը երկու կողմերի, յատկապէս Թուրքիայի վրայ՝ հնարաւորինս արագացնելու կարգաւորման գործընթացը: Դրա վառ դրսեւորումը կարելի է համարել Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող երկու որոշումների ընդունումը մարտի սկզբին մէկ շաբաթ տարբերութեամբ (մարտի 4, 11):

Հայոց ցեղասպանութիւնը ճանաչում եւ դատապարտում են նախ Միացեալ Նահանգների Քոնկրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովը (եւ որոշում հարցը մտցնել Քոնկրեսի ընդհանուր օրակարգ), յետոյ էլ՝ Շուէտը: Հաշուի առնելով ստեղծուած պայմանները եւ ապրիլի 24-ի մօտ լինելը՝ Թուրքիան սկսեց ջանքեր գործադրել դուրս գալու իրավիճակից: Այս նպատակով ապրիլի 7-ին Երեւան է ժամանում Թուրքիայի վարչապետ Էրտողանի յատուկ բանագնացը՝ Թուրքիայի փոխարտաքին գործերի նախարար Ֆ. Սինիրլիօղլուն, ով նախագահ Ս. Սարգսեանին է փոխանցում Թուրքիայի վարչապետի նամակը, որով վերջինս Ուաշինկթընում կայանալիք Միջուկային անվտանգութեան գագաթնաժողովի շրջանակներում հանդիպում է խնդրում Հայաստանի նախագահից: Ինչպէս ցոյց տուեցին հետագայ իրադարձութիւնները, այս հանդիպումը տեղի չունեցաւ բանակցութիւններում առկայ խոչընդոտների պատճառով: Ամիսներ շարունակ Թուրքիան վարում էր քաղաքականութիւն, որը հակասում էր բանակցութիւնների՝ «առանց նախապայմանների» ձեւաչափին եւ անընդունելի էին Հայաստանի համար:

Ստեղծուած իրավիճակը հանգուցալուծում ստացաւ ապրիլի 24-ի նախօրեակին: Ապրիլի 22-ին նախ Հայաստանի իշխող քուալիսիոնը որոշում է կայացնում Հայաստանի Ազգային ժողովում առկախել արձանագրութիւնների վաւերացման ընթացքը, որին էլ հետեւում է նախագահ Ս. Սարգսեանի կոչը, որով յայտարարում էր Հայաստանի կողմից արձանագրութիւնների վաւերացման ընթացքի կասեցման

մասին: Ծանուցումն ուղարկւում է Թուրքիայի հանրապետութիւն: Այսպիսով, աւարտւում է մօտ երկու տարի առաջ սկսուած դիւանագիտական յարաբերութիւնների վերականգնման փորձի եւս մէկ փուլ:

Սակայն հետաքրքրական է, որ արձանագրութիւնների տապալումից յետոյ էլ Թուրքիան չէր դադարում վարել գործընթացի շարունակութեան նմանակման քաղաքականութիւնը[1]: Թուացեալ գործընթացն իր հիմնական արտացոլումն է գտել «հասարակական դիւանագիտութեան» ձեւաչափում: Աշխուժացան հայ-թուրքական հասարակական բազմազան շփումները, համատեղ սեմինարները, քննարկումները, փոխայցելութիւնները եւ դասընթացները երկու երկրներում ու արտերկրում: Նշենք, որ այս ամէնը մեծ խրախոյս եւ օժանդակութիւն է ստանում արեւմտեան նուիրատու կազմակերպութիւնների կողմից: Միաժամանակ Թուրքիան կիրառում է զանազան քարոզչական մեթոտներ եւ հնարքներ, որոնք նոյնպէս նպատակ են հետապնդում ապացուցելու հայ-թուրքական գործընթացի շարունակականութիւնը: Ընդ որում, քարոզչութեան թիրախ է ոչ միայն միջազգային հանրութիւնը, այլեւ հայաստանեան ներքին լսարանը: Յիշատակենք միջազգային հանրութեանն ուղղուած նմանատիպ մի քանի իրադարձութիւն:

Ապրիլի 24-ին Պոլսի Թաքսիմ հրապարակում մի շարք թուրք մտաւորականներ եւ իրաւապաշտպաններ յարգում են Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը: Սա առաջին դէպքն էր Թուրքիայում, երբ ապրիլի 24-ին Եղեռնի զոհերին նուիրուած հրապարակային միջոցառում է տեղի ունենում:

Սեպտեմբերի 19-ին Վանայ լճում գտնուող Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում 1915 թ. Մեծ եղեռնից յետոյ առաջին անգամ պատարագ մատուցուեց: Պատարագի ընթացքում եկեղեցու խաչը, որ պատրաստուել էր մի քանի տարի առաջ եւ պահւում էր Պոլսի հայոց պատրիարքարանում, տեղադրուած չէր գմբէթին, ինչը բացասական արձագանգ առաջացրեց հայերի շրջանում: Սա դարձաւ այն կարեւոր իրադարձութիւնը, որ եւս մէկ անգամ բարձրացրեց հայ-թուրքական յարաբերութիւնների թեման եւ դարձրեց քննարկումների առարկայ:

Հոկտեմբերի 1-ին տեղադրուեց Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու խաչը, որին ի պատասխան թուրքական «Ազգայնական շարժում» կուսակցութիւնն Անիի մայր տաճարում ուրբաթօրեայ նամազ կազմակերպեց: Կուսակցութեան նախագահ Տելլեթ Պահչելին այսպիսով սկսեց 2011 թ. խորհրդարանական ընտրութիւնների քարոզարշաւը:

Հոկտեմբերի 27-ին հաստատուեց Թուրքիայի ազգային անվտանգութեան քաղաքականութեան նոր փաստաթուղթը: Ըստ թուրքական մամուլի՝ Հայաստանը հանել «Կարմիր գիրք» կոչուող փաստաթղթի՝ վտանգ ներկայացնող երկրների շարքից:

Հոկտեմբերի 29-ին աւելի վաղ հայ-թուրքական սահմանն ապօրինաբար հատելու մասին անհիմն տեղեկատուութիւն տարածած թուրքական «Հզօր Թուրքիա» կուսակցութեան նախագահ Թունա Պեքլեւիչը ժամանում է Հայաստան եւ վերա-

[1] Տե՛ս Մելքոնեան Ռ., Հայաստան-Թուրքիա. թուրքական քաղաքականութեան որոշ միտումներ http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=5153 :

հաստատում Հայաստանի սահմանը խախտելու իր պնդումները: Ըստ նրա՝ այդ քայլը նպատակ էր հետապնդում ուշադրութիւն հրաւիրել հայ-թուրքական սահմանների փակ լինելու հանգամանքի վրայ: Պարզաբանումներ տալու նպատակով նա հրաւիրուում է Հայաստանի Ազգային անվտանգութեան ծառայութիւն, որտեղ նրան առաջարկում են լքել Հայաստանի տարածքը:

Տարին աւարտուեց եւս մէկ կարեւոր իրադարձութեամբ. դեկտեմբերի 14-15-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնը կազմակերպել էր միջազգային երկօրեայ գիտաժողով՝ «Ցեղասպանութեան յանցագործութիւնը. կանխարգելում, դատապարտում եւ հետեւանքների վերացում» թեմայով, որին մասնակցում էին 18 երկրներից ժամանած հեղինակաւոր գիտնականներ եւ փորձագէտներ, իսկ հիւրերին ողջունեց Հայաստանի նախագահը: Գիտաժողովը կարելի է ազդանշան համարել, որ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումը շարունակում է մնալ Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգային հարցը եւ դեռ շարունակուելու են այդ ուղղութեամբ իրականացուող քայլերը:

Ահա այս իրադարձութիւնների լուսաբանումը, պարզաբանումն ու վերլուծութիւնը դարձան «Ազդակ»-ի թեմատիկ քննարկման եւ քարոզչականութեան ապահովման հիմնական թիրախները հայ-թուրքական առնչութիւնների շրջանակներում:

«Ֆութպոլային դիմանագիտութեան» մեկնարկից սկսած՝ ողջ լիբանանահայ մամուլը, այդ թւում յատկապէս ՀՅԴ պաշտօնաթերթ «Ազդակ»-ը իւրաքանչիւր համարում արձագանքել է զարգացող դէպքերին՝ ներկայացնելով Սփիւռքի պայքարը Երեւան-Անգարա հնարաւոր բանակցութիւնների եւ ստորագրուած արձանագրութիւնների դէմ: Նախ թուաց, որ դեռեւս 2009 թ. վերջին Սփիւռքը հանդարտուեց՝ կարծես մի կողմ թողնելով բողոք-ցոյցերն ու համակերպուելով ստեղծուած իրավիճակին: Անգամ արձանագրութիւնների ստորագրումից դեռեւս մէկ ամիս անց՝ նոյեմբերի 11-ին «Ժամանակ» էլ. թերթում հրապարակուեց մի յօդուած՝ «Սփիւռքը անապատացման ճանապարհին»: «Հայկական սփիւռքը բողոքի վարքագծից կարծես թէ վերադառնում է Հայոց ցեղասպանութեան ճանաչման խնդրով թակելու արտասահմանեան դռներն ու ճանաչում մուրալու»: Պատահական չէ, որ այս գրութեանը անդրադարձաւ «Ազդակ»-ը՝ պատասխան հնչեցնելով «Առանց «գրեթէ»-ի» խմբագրականում. ««Ժամանակ»-ի ետին կանգնած ուժերը իրենք զիրենք համոզած էին, որ Հայաստան-Թուրքիա արձանագրութեան դէմ շղթայազերծուած բողոքի գործողութիւնները կրնան ծառայեցնել իրենց նպատակներուն, Հայաստանի պետութեան հեղինակութիւնը հարուածել՝ յաչս միջազգային հանրութեան կարծիքին եւ միջազգային ընտանիքին: Սահմանազատումը իշխանութեան քաղաքական ուղեգիծին ընդդիմանալու եւ պետական շահերը հարուածելու մօտեցումներուն միջեւ վաղուց ջնջուած էր հայրենի ապակառուցողական ընդդիմութեան համար»[1]: Բայց եւ պարզ է, որ Սփիւռքը եւ յատկապէս լիբանանահայ համայնքը ոչ թէ արտասահմանեան դռները թակող եւ ճանաչում մուրացող կարգավիճակում է, այլ «Թուրքիոյ կողմէ հայութեան դէմ յայտարարած պայքարին մէջ գտնուած՝ ինքնա-

[1] «Ազդակ» օրաթերթ, 2009 թ., Բեյրութ, նոյեմբերի 13, թիւ 207, էջ 1:

պաշտպանութեան առաջին դիրքին վրայ՝ պայքարի զանազան ոլորտներուն մէջ՝ ցուցական՝, քարոզչական՝, զինեա՛լ» [1]:

Եւ արձանագրութիւնների ստորագրումից, առաւել եւս կասեցումից յետոյ «Ազդակ»-ը ամենեւին չի թուլացրել իր դիրքերը խնդրի լուսաբանման հարցում: Եթէ մինչ այդ օրաթերթը հարցը առաւել ներկայացնում էր լրատուական, իրազեկման հողի վրայ՝ եւ միայն խմբագրականներում ներկայացնելով որոշ դէմքերի եւ իրադարձութիւնների վերլուծութիւն ու պարզաբանում, ապա 2011 թ. համարներից սկսած՝ նկատելի է թերթի՝ որպէս քարոզչամիջոցի դերակատարման բարձրացումը, քանզի արդէն առաւել մեծ տեղ են զբաղեցնում գիտական յօդուածները, լայնածաւալ վերլուծութիւնները հնարաւոր վտանգների, այլեւ հնարաւոր ձեռքբերումների մասին: Նկատելի են առաջարկներ ընդգրկող յօդուածներ՝ դեռեւս աւարտուած չհամարելով թուրքական խաղը: Ուստի արձանագրութիւնների կասեցումից յետոյ «Ազդակ»-ը Երեւան-Անգարա բանակցութիւնների լուսաբանումը դնում է նոր հողի վրայ՝ միաժամանակ պահպանելով կուսակցական յստակ դիրքորոշում. այն է՝ ՀՅ Դաշնակցութիւնը դէմ չէ եւ երբեք էլ դէմ չի եղել Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների բնականոնացմանը, բայց իրօք առանց նախապայմանների՝ միջազգային իրաւունքի սահմաններում: Բազմիցս յայտարարուել է այս մասին՝ լաւ գիտակցելով, որ 21-րդ դարում «փակ սահմանը անոնորմալ երեւոյթ է» [2]:

Աւելի՛ն. եթէ մինչ այս հայ-թուրքական յարաբերութիւնների բարելաւման գործընթացում ազրպէյճանական կողմի միջամտութիւնը պարզապէս ակնարկւում էր, ապա այժմ այն ներկայացւում է յստակ եւ փաստացի: «Ազդակ»-ը յատուկ ուշադրութեամբ շեշտում է այն հանգամանքը, որ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնների դուրս բերմանը Թուրքիայի խորհրդարանի օրակարգից առաջին անգամ հաղորդեց ոչ թէ թուրքական, այլ ազրպէյճանական լրատուամիջոցը. «Ազրպէյճանական «news.az» կայքէջը վկայակոչելով թրքական զանգուածային լրատուամիջոցները՝ կը նշէ, որ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները, որոնք պէտք է քննարկուէին Թուրքիոյ խորհրդարանի նախկին կազմին կողմէ, իրենց իրաւական ուժը կորսնցուցած են խորհրդարանի օրակարգէն:

Թուրքիոյ խորհրդարանի օրակարգէն դուրս բերած են 898 օրինագիծ եւ որոշում, որոնց շարքին Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու մասին արձանագրութիւնները»[3]: «1news.az»-ի կողմից լրատուութեան հրապարակումից բաւական ժամանակ անց միայն Անգարան եւս հաստատեց լուրը: «Ազդակ»-ը դա Թուրքիայի կողմից որոշ նրբանկատութիւններով թելադրուած խաղ համարեց. «Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու վաւերացման գործընթացը առանձնապէս չի սառեցուիր Թուրքիոյ կողմէ: Արձանագրութիւնները պարզապէս մաս կը կազմեն անվաւեր նկատուող 898 նախագիծերու թղթածրարին: Ի տարբերութիւն նախագահի յայտարարութեամբ կատարուած յատուկ սառեցումին:

---

[1] «Ազդակ» օրաթերթ, 2009 թ., հոկտեմբերի 6, թիւ 174, էջ 1:

[2] Հայ Յեղափոխական Դաշնակցութեան առաջարկած փոփոխութիւնները, Երեւան, 2009 թ., http://notoprotocols.net/:

[3] «Ազդակ» օրաթերթ, 2011 թ., օգոստոսի 23, http://www.aztagdaily.com/archives/25996:

Ազրպէյճանն է, որ լրատուամիջոցներու ճամբով որոշումին իւրայատկութիւն կ՚ուզէ տալ՝ մեկնելով Ղարաբաղը «չզոհելու» մտադրութենէն: Այլապէս, ըստ էութեան հիմնական նորութիւն չկայ: Վաւերացումը ձգձգելու թրքական խաղն է, որ կը շարունակուի նախապայմանային քաղաքականութեան առընթեր՝ յաւելեալ հիմնաւորեալ պատճառ տրամադրելով, որ Երեւանը անվաւեր յայտարարէ իր ստորագրութիւնը: Այդ պարագային Թուրքիան 897 նախագիծ կ՚ունենայ դարակներուն մէջ մետասաներորդ պահուն անոնցմէ ուզածը բերելու խորհրդարան եւ օրակարգի վերածելու: Փոխան՝ 898-ի»[1]:

Յատկանշական է, որ «Ազդակ»-ը խնդրի առնչութեամբ ներկայացնում է նաեւ «միջազգային ընտանիքի» ներկայացուցիչների դիրքորոշումներն ու տեսակէտները: Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարար Հիլըրի Քլինթընի Թուրքիա այցելութեան ընթացքում օրակարգային զանազան կէտերին առընթեր ներառուած էր նաեւ Երեւան-Անգարա յարաբերութիւնների պատկերը. «Երեւան-Անգարա յարաբերութիւնները յայտնապէս կը թուին հրատապ կարեւորութիւն ներկայացուցած ըլլալ պաշտօնական Ուաշինկթընի ներկայացուցիչին համար: Թէ՛ իր թուրք պաշտօնակիցին եւ թէ՛ թուրք ընդդիմութեան հետ կայացած հանդիպումներուն ընթացքին արծարծուած է Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններուն այսօրուան կարգավիճակին հարցը: Լրատուութիւններուն համաձայն, նախարար Քլինթընն յստակ փորձ կատարած է ապասառեցնելու արձանագրութիւններու վաւերացման ընթացակարգը»[2]: Հանդիպումների ընթացքում նախարարի՝ իշխանութեան ներկայացուցիչներին ուղղած հարցմանը, թէ ինչո՞ւ խորհրդարանի օրակարգ չեն մտցուում Հայաստանի հետ ստորագրուած արձանագրութիւնները, պատասխան է հնչեցուել, թէ հանրապետական կուսակցութիւնը դէմ է այդ արձանագրութիւններին, այդ պատճառով էլ փաստաթղթերը ներկայացուած չեն խորհրդարանի վաւերացման: «Ազդակ»-ը պարզ նկատում է թուրքական կողմի խաղը՝ միաժամանակ բացայայտելով հանդիպումների յաջորդականութեան մտածումները, ինչը «ցոյց կու տայ, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը նման մեղադրանք յղած է ընդդիմութեան ուսերուն, առ ի պատասխան ամենայն հաւանականութեամբ իր ամերիկացի պաշտօնակիցին ցուցադրած աճապարանքին՝ արձանագրութիւնները վաւերացնելու: Նախապայմանային քաղաքականութիւնը այս պարագային չէ դրուած իբրեւ խոչընդոտող գործօն՝ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու վաւերացման: Անգարան Պաքուն կը հանգստացնէ նախապայմանը յանկերգելով, Ուաշինկթընին կը ներկայանայ առանց նախապայմաններու՝ ի՛ր ընդդիմութեան ուսերուն բարդելով պատասխանատուութիւնը եւ միջազգային ընտանիքին հանգուցալուծման արգելակումին համար բացարձակ մեղաւոր կը նկատէ հայկական կողմը:

Պարզ է, որ Թուրքիան առայժմ մտադիր չէ ապաշրջափակելու Հայաստանի Հանրապետութիւնը եւ միջազգային ընտանիքի պահանջներուն տեղի չտալու յստակ առաջադրութեամբ պատրուակային խուսանաւումներով արգելակիչ գոր-

[1] Նոյն տեղում, օգոստոսի 24, http://www.aztagdaily.com/archives/26155:
[2] Նոյն տեղում, յուլիսի 17, http://www.aztagdaily.com/archives/20665:

ծօններ յառաջ կը բերէ: Ստեղծուած իրավիճակում ՀՅԴ պաշտօնաթերթի առաջարկը յստակ է. «Խնդիրը այն է, որ մինչեւ թրքական խաղի աւարտը, հայկական կողմը ինքնաբերաբար նախաձեռնողականութեամբ հանդէս գայ եւ ետ վերցնէ իր ստորագրութիւնները թրքական խուսանաւումներուն համար պարարտ ենթահող տրամադրող այս արձանագրութիւններէն»[1]:

Իւրաքանչիւր իրադարձութեան, հանդիպման կողքին «Ազդակ»-ը բաց չի թողնում ոչ մի պաշտօնական յայտարարութեան ներկայացում ու պարզաբանում: Այսպէս, Թուրքիայի նախագահ Ա. Կիւլը Լոնտոնում թուրք լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ յայտնել է, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սառեցուած յարաբերութիւնները հնարաւոր չէ փչելով հալեցնել: «Դժուար հարցերը մէկ քայլով չեն լուծուիր: Իրավիճակը այնքան սառած է, որ փչելով չես կրնար հալեցնել: Շարք մը նախաձեռնութիւններու անհրաժեշտութիւնը կայ: Պահ մը ժամանակը նպաստաւոր էր, սակայն այն կարծիքը ունիմ, որ կարելի չեղաւ ամէն ինչի շուրջ համաձայնութիւն գոյացնել: Շրջանին մէջ բոլորը այդ հոլովոյթին մէջ իրենց շահը կը հետապնդէին: Յառաջ եկան դժուարութիւններ, սակայն կարելի չէ ըսել, որ ամէն ինչ մեռած է», ասել է Թուրքիայի նախագահը[2]: Իսկ Ազրպէյճանում Թուրքիայի դեսպան Հուլուսի Քլըչ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւորման հոլովոյթի վերաբերեալ հերթական յայտարարութիւնն է կատարել. «Քանի տակաւին ազրպէյճանական հողերը չեն ազատագրուած, հայ-թրքական սահմանը պիտի չբացուի»[3]: Այս առումով ՀՅԴ Բիւրոյի Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենեակի պատասխանատու Կիրօ Մանոյեանը ընդգծում է, որ այս հարցում հայկական դիւանագիտութիւնը ձախողուած է, որովհետեւ թէ՛ Միացեալ Նահանգները, թէ՛ Եւրոպական միութիւնը սկսել են խօսել այն մասին, որ հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատումը միայն կարելի է ղարաբաղեան հարցի լուծումով: «Ասիկա տեղ մը մեր դիւանագիտութեան ձախողութիւնն է, որովհետեւ մեր դիւանագիտութիւնը անընդհատ կը յայտարարէր, որ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները պէտք է հաստատուին առանց նախապայմանի, բայց արդէն կը տեսնենք, որ թէ՛ Միացեալ Նահանգները, թէ՛ Եւրոպական Միութիւնը արդէն կը խօսին նախապայմաններու մասին, այսինքն՝ երբ լուծուի ղարաբաղեան հարցը, այն ժամանակ ալ պիտի կարգաւորուին Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները»[4]:

Սակայն դաշնակցական գործիչը համոզում յայտնեց, որ դիւանագիտութիւնը կարող է շտկուել, եթէ Հայաստանն իր ստորագրութիւնը ետ վերցնի, քանի որ, ինչպէս բացայայտ փաստում է «Ազդակ»-ը, այսօրուայ դրութեամբ Թուրքիան շահագրգռուած չէ արձանագրութիւնները վաւերացնելով: Իսկ «Երկիր» օրաթերթին տուած հարցազրոյցում քաղաքագէտ Լեւոն Շիրինեանը յայտնեց, որ իր համար անընդունելի է՝ «երբ կ՚ըսեն, որ արձանագրութիւնները օրակարգէն հանելու մէջ ոչինչ կայ»: Քաղաքագէտը նշեց, որ Թուրքիա Հայաստանի նկատմամբ շատ կարծր

[1] Նոյն տեղում:
[2] Նոյն տեղում, նոյեմբերի 25, http://www.aztagdaily.com/archives/40181:
[3] Նոյն տեղում, նոյեմբերի 26, http://www.aztagdaily.com/archives/40379:
[4] Նոյն տեղում, օգոստոսի 17, http://www.aztagdaily.com/archives/25068:

տեսակէտ ունի: Ան աւելցուց, որ եթէ թուրքերը արձանագրութիւնները շատ արագ ձեւով խորհրդարանի օրակարգին մէջ չմտցնեն, ապա ատիկա կը նշանակէ, որ ամերիկացիները իրենց քաղաքականութեան մէջ ձախողած են: Քաղաքագէտը նշեց, որ Հայաստանի քայլը դէպի Թուրքիա այդ արձանագրութիւններուն առումով ճիշդ եղած է՝ անվտանգութեան շեմը նկատի ունենալով: Ըստ անոր, հիմա Հայաստան պէտք է լրջանայ Թուրքիոյ հետ յարաբերութիւններուն մէջ»[1]:

Սակայն նշենք, որպէս խաղի մի մաս, 2011 թ. հոկտեմբերին թուրքական «Թաքսիմ» օրաթերթը յայտնում է, որ Երեւանի նկատմամբ իբրեւ «բարի կամքի ցուցաբերում» Թուրքիայի կառավարութիւնը՝ օրէնսդիր մարմնի կողմից չեղեալ յայտարարուած Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները վերադարձուած են խորհրդարան[2]: Սա «Ազդակ»-ը ներկայացնում է ռուս քաղաքագէտի պարզաբանմամբ: Ստանիսլաւ Թարասովը մեկնաբանելով Թուրքիայի նախարարաց խորհրդի՝ Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնները խորհրդարան վերադարձնելու մասին որոշումը, գրում է, որ Անգարան Երեւանի հետ նոր խաղի է պատրաստում: «Նախ եւ առաջ, նշենք, որ թրքական լրատուամիջոցներուն կարծիքով, Թուրքիա արձանագրութիւնները խորհրդարան վերադարձնելով՝ Հայաստանի նկատմամբ բարի կամքի դրսեւորում կը կատարէ: Միւս կողմէ, անկասկած անիկա որոշակի ազդանշան է Ազրպէյճանին, ակնարկ այն բանի մասին, որ Անգարա Պաքուի հետ հետագայ յարաբերութիւններուն մէջ պիտի օգտագործէ հայկական խաղաքարտը», ինչպէս նաեւ «Թուրքիոյ՝ Հայաստանի հետ յարաբերութիւններու վերականգնման գաղափարը կրնայ դրական կերպով անդրադառնալ Եւրոպայի հետ երկխօսութեան վրայ, այն պարագային, երբ մայրցամաքային ծովու ընդերքի խնդիրներուն պատճառով Թուրքիա Կիպրոսի եւ միեւնոյն ժամանակ Յունաստանի հետ իր յարաբերութիւնները փճացուցած է: Բացի ատկէ, Թուրքիա ատիկա կրնայ օգտագործել իբրեւ յաղթաթուղթ, եթէ Ազրպէյճան սկսի Թուրքիայէն դէպի Իսրայէլի կողմը հեռանալ», գրում է ռուս փորձագէտը[3]: Իսկ ըստ Կիրօ Մանոյեանի, արձանագրութիւնների վերադարձը Թուրքիոյ խորհրդարան «ոչինչ կը նշանակէ, քանի որ այդ արձանագրութիւնները անցեալին ալ օրակարգի վրայ կը գտնուէին, սակայն չէին վաւերացուեր: Թուրքիա վաւերացման ուղղութեամբ նոյնիսկ նուազագոյնը չէր կատարեր, ինչ որ անհրաժեշտ էր, որպէսզի փաստաթուղթերու վաւերացումը անպայման խորհրդարանի համապատասխան յանձնախումբին տեսակէտը ունենար: Արձանագրութիւնները օրակարգին վրայ պահելով՝ Թուրքիա պարզապէս կ՛ուզէ ստեղծել այն տպաւորութիւնը, որ կայ հոլովոյթ, իսկ այդ հոլովոյթը կ՛ենթադրէ Հայաստանի վրայ այլ պետութիւններու կողմէ ճնշում, որպէսզի մենք մեր ստորագրութիւնը ետ չվերցնենք»[4]:

«Ազդակ»-ի ներկայացրած տեսակէտների շարքում յատկանշական են թուրքական եւ ազրպէյճանական դիտարկումներին կատարած անդրադարձերը, ինչը գրեթէ նկատելի չէր հայ-թուրքական յարաբերութիւնների հնարաւոր հաստատման

[1] Նոյն տեղում, օգոստոսի 30, http://www.aztagdaily.com/archives/27128:
[2] Նոյն տեղում, սեպտեմբերի 26, http://www.aztagdaily.com/archives/30864:
[3] Նոյն տեղում, սեպտեմբերի 27, http://www.aztagdaily.com/archives/31000:
[4] Նոյն տեղում, սեպտեմբերի 28, http://www.aztagdaily.com/archives/31359:

առաջին փուլում: Այսպէս, թուրք նախկին դեսպան Էօմեր Լիւթիմ ազրպէյճանական ԱՓԱ լրատու գործակալութեանը տուած հարցազրոյցում յայտարարել է, որ Հայաստան-Թուրքիա խաղաղ հոլովոյթ այլեւս գոյութիւն չունի: Ընդգծելով, որ նախագահ Ս. Սարգսեանը եւս չի հաւատում այլեւս խաղաղ հոլովոյթի շարունակութեանը՝ թուրք փորձագէտը նշել է. «Հայաստանի նախագահը արդէն մէկ տարիէ ի վեր հանդէս կու գայ կարծր յայտարարութիւններով, կը փորձէ Թուրքիան մեղադրել արձանագրութիւններու տառին եւ ոգիին հաւատարիմ չմնալու մէջ, կը պահանջէ առանց նախապայմաններու վաւերացնել արձանագրութիւնները եւ կ՚ըսէ, թէ այդ փաստաթուղթերը որեւէ առնչութիւն չունին ղարաբաղեան տագնապի լուծման հետ: …Ես վստահ չեմ, որ հայ-թրքական խաղաղ հոլովոյթը տակաւին գոյութիւն ունի: Կրնանք ըսել, որ Սարգսեանը նոյնպէս ոչինչ կ՚ակնկալէ խաղաղ հոլովոյթէն, որովհետեւ գիտէ՝ Թուրքիոյ դիրքորոշումը երբեք պիտի չփոխուի: Հարցը հասաւ հոն, որ Հայաստանի նախագահը յայտարարեց՝ «Ղարաբաղը մենք վերցուցինք, իսկ ապագայ սերունդներուն կը ձգենք Աղր տաղը (Արարատը)»[1]:

Այսպիսով, հայ-թուրքական «ֆութպոլային դիւանագիտութիւնը» ձախողուեց: Աւելի՛ն. կողմերի դիրքորոշումները աւելի կարծրացան:

«Ազդակ»-ը կատարեց վերջնական եզրայանգում. Հայաստան-Թուրքիա դիւանագիտական յարաբերութիւնները կարող են հաստատուել, եթէ՝

Անգարան հրաժարուի նախապայմաններ առաջ քաշելու իր անփոփոխ քաղաքականութիւնից,

Արցախում տեղի ունենայ սթաթիւս-քուոյի փոփոխութիւն յօգուտ Ազրպէյճանի,

Երեւանը բաւարարի թուրքական նախապայմանները[2]:

Нарине Нушерванян, Отражение армяно-турецких отношений в «Аздак»-е после приостановления протоколов (2010-2013 гг.), - В статье представлен краткий обзор позиции официальной газеты "Аздак" в сфере армяно-турецких отношений после приостановления протоколов, показывая борьбу армянской диаспоры, указывая на возможные переговоры между Ереваном и Анкарой и противоречия в подписании протоколов. В результате подход отражен в вопросе диаспоры, а также в позиций и взглядах "международной семьи". Без внимания не осталась игра турецкой стороны и отзывы Азербайджана. Таким образом, “Аздак” утверждает, что Анкара не откажется от своей политики продвижения предпосылок, так же очевидно, что и Ереван не может удовлетворить турецкие предпосылки.

Narine Nushervanyan, The Reflection of the Armenian-Turkish Relations in “Aztag” after the Records of Suspension (2010-2013), - The article presents and summarizes Armenian Revolutionary Federation’s (ARF) official newspaper Aztag’s position in the records of Armenian-Turkish relations after the suspension; referring to the

[1] Նոյն տեղում, օգոստոսի 5, http://www.aztagdaily.com/archives/23370:

[2] «Ազդակ», բացառիկ 24 ապրիլ 2014, էջ 8:

struggle of the Armenian diaspora, against the signed records of Yerevan-Ankara negotiations. As a result, it reflects the approach of the diaspora towards the issue, as well as the views and positions of the presenters of “international family”. It also observed the tricky games of the Turkish side, and the coverage of the Azerbaijani reviews. Thereby, “Aztag” confirms that Ankara won’t abandon its policy of promoting preconditions, as it is equally evident that Armenia cannot meet Turkey's preconditions.

Նարինէ Նուշերվանեան - ԵՊՀ սփիւռքագիտութեան ամբիոնի մագիստրանտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի լաբորանտ: